ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 38

«13» 05 2022 թ.

ք. Երևան

ԱՐԱՅԻԿ ԱՐՇԱԿԻ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արայիկ Արշակի Բրուտյանը ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 2013 թվականի դեկտեմբերի 13-ից, նախ՝ մինչև 2015 թվականի մարտի 24-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի, մինչև 2016 թվականի ապրիլի 28-ը՝ նույն վարչության ավագ դատախազի պաշտոնում:

2016 թվականի մայիսի 15-ից կրկին անցել է աշխատանքի ՀՀ դատախազության համակարգում և մինչև 2017 թվականի հուլիսի 27-ը՝ զբաղեցրել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնը: 2017 թվականի հուլիս 27-ից զբաղեցնում է ՀՀ գլխավոր դատախաության դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի պաշտոնը: Արայիկ Բրուտյանն ունի նաև քննչական աշխատանքի երկարամյա փորձառություն՝ 1994 թվականից մինչև 2013 թվականը զբաղեցրել է ՀՀ ՊՆ քննչական ստորաբաժանումներում տարբեր պաշտոններ:

Արայիկ Բրուտյանը ներկա պաշտոնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ոլորտում իրականացրել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված գործառույթները, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում, ձերբակալվածների պահման վայրերում և անձանց ազատությունը սահմանափակելու հետ կապված

գործառույթներ իրականացնող այլ հաստատություններում և դրանց համապատասխան ստորաբաժանումներում կատարել է ստուգումներ և ուսումնասիրություններ, դրանց վերաբերյալ կազմել համապատասխան արձանագրություններ, ներկայացրել միջնորդագրեր և հաղորդումներ, քննարկել է նշված ոլորտները կարգավորող օրենսդրության խախտումների վերաբերյալ հաղորդումներն ու հայտարարությունները, դատարաններում մասնակցել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կողմից ներկայացված միջնորդությունների, դատապարտյալների դիմումների և բողոքների քննարկմանը:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Վարդաշեն», ինչպես նաև «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ իրականացրել է հսկողություն:

Աշխատանքային պարտականությունների տարածքային բաժանման սկզբունքով վերահսկողություն է իրականացրել Աջափնյակ և Դավթաշեն, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունների կողմից՝ ոլորտին վերաբերող կատարվող աշխատանքների նկատմամբ, վերահսկողություն է իրականացրել նաև ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության կողմից այլընտրանքային պատիժների կիրառման օրինականության նկատմամբ:

2017 թվականից մինչև օրս ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում, ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունում, ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրական կազմակերպությունում իրականացրել է ստուգումներ, որի արդյունքում հայտնաբերվել է 160 խախտում:

Նշված ժամանակահատվածում դատարաններում մասնակցել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու, հարկադիր բուժման տեսակը փոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունների քննարկման, ստուգել է դատապարտյալների նկատմամբ համաներում կիրառելու, պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու որոշումների օրինականությունը և կազմել համապատասխան եզրակացություններ և կայացրել համապատասխան որոշումներ:

Արայիկ Բրուտյանը տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը, պրակտիկ աշխատանքում ի հայտ եկած օրենսդրական բացերի և ոչ հստակ իրավակարգավորումների կապակցությամբ կազմել և ներկայացրել է օրենսդրական փոփոխությունների նախագծեր, օժտված է կազմակերպչական անհրաժեշտ ընդունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է և կարգապահ, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Արայիկ Բրուտյանը ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 2018 թվականին պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալով, իսկ 2021 թվականին՝ հուշանվեր-ժամացույցով: Արայիկ Բրուտյանը կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Արայիկ Բրուտյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Արայիկ Բրուտյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ